ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հունիսի 2014թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի ընդհանուր բաժնային սեփականությունը համարվող Արցախի փողոցի հ.12ա շենքի հ.46՝ 48.75քմ մակերեսով բնակարանի իր բաժնեմասը (1/2) (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.11.2013թ. հ.13112013-01-0310 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արեգնազան Մկրտչյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արեգնազան Մկրտչյանը դիմել է Երևանի քաղաքապետարան Էրեբունի վարչական շրջանի Արցախի փողոցի հ.12ա շենքի հ.46՝ 48.75քմ մակերեսով բնակարանի բաժնեմասն իր անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Արցախի փողոցի հ.12ա շենքի հ.46 բնակարանն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Արեգնազան Մկրտչյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.11.2013թ. հ.13112013-01-0310 վկայական):

Նշված բնակարանը՝ 1960-ական թվականներին պետության կողմից, որպես երկաթգծի աշխատակից տրամադրվել է Արեգնազան Մկրտչյանի մորը՝ Եվա Յացկովսկայային: Ամուսնու մահից հետո Եվա Յացկովսկայան 1989-1990 թվականներին ամուսնացել է Խաչիկ Համբարձումյանի հետ: Էրեբունու շրջգործկոմի 1994 թվականի որոշմամբ՝ Արցախի փողոցի հ.12ա շենքի հ.46 բնակարանը սեփականության իրավունքով տրամադրվել է Եվա Յացկովսկայային և Խաչիկ Համբարձումյանին: Եվա Յացկովսկայայի և Խաչիկ Համբարձումյանի մահից հետո նշված բնակարանի բաժնեմասի նկատմամբ (1/2), որպես Եվա Յացկովսկայայի ժառանգ ձևակերպվել է Արեգնազան Մկրտչյանի ժառանգության իրավունքը, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում, սակայն Արեգնազան Մկրտչյանի ժառանգության իրավունքը նշված բնակարանի մյուս բաժնեմասի (1/2) նկատմամբ հնարավոր չի եղել ձևակերպել, քանի որ Եվա Յացկովսկայայի և Խաչիկ Համբարձումյանի ամուսնությունն օրենքով սահմանված կարգով գրանցված չի եղել:

Նկատի ունենալով, որ Խաչիկ Համբարձումյանը ժառանգներ չի ունեցել, նշված բնակարանի բաժնեմասը ճանաչվել է անժառանգ գույք և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածով սահմանված դրույթների համաձայն բաժնեմասի նկատմամբ ձևակերպվել է Երևան համայնքի ժառանգության իրավունքը, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում:

Համաձայն «Սասունցի Դավիթ-11» համատիրության կողմից 04.06.2014թ. տրված տեղեկանքի Արեգնազան Մկրտչյանը 1959 թվականից փաստացի բնակվում է Արցախի փողոցի հ.12ա շենքի հ.46 բնակարանում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի 03.06.2014թ. հ.ԿԽ-2/3614 գրության՝ Արեգնազան Մկրտչյանի անվամբ Արցախի

փողոցի հ.12ա շենքի հ.46 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք, ինչպես նաև վերջինիս անվամբ Հայաստանի Հանրապետությունում այլ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում և վերջին հինգ տարիների ընթացքում անշարժ գույքի օտարման և ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ